պատմութիւնը։ Իդդիրը, Իդդի՛րը...

Սաթօն երկայնահասակ, նիհար մի աղջիկ է։ Ինչ որ առնական բան կայ մէջը. անտրրտունջ աշխատում է եւ անդադար խօսում։ Երբեք չկարողացայ իմանալ՝ քանի՞ տարեկան է։ Լաւատես է, չնայած որ ունեցած չունեցածը թուրքերը տարել են եւ բերած մի քանի ոսկին էլ եղբայրները յափշտակել են։

«Դրանց տունը քանդուի, մեր տունը քանդեցին»։

Ու անդադար աշխատում է։

* * *

— ... Ընտանիքը եւ պետութիւնը։

Եթէ լաւ մտածել, հին խմաստով, ոչ ընտանիք կայ եւ ոչ պետութիւն։

Ընտանիքը, շուարած, աղտի եւ թշուառութեան միջից, ձեռքերը կարկառում է փողոցին։ Փողոցը, ոտքը կոտրած շան նման, պոչը սեղմած, ցատկռտելով, պատերի տակ մրմրում է եւ աղքատ ամբոխների ետեւից վազում։ Պետութիւնը՝ հին այս ապրանքների մօտ կանգնած՝ եւրոպական մեր գործարանների ցանկերն է նայում եւ ձեռքը գլխին ոջիլ որսում։

Ամէն ոք փլած չէնքի տակն է պատսպարուել եւ վախով սպասում է, թէ չլինի՞ որ նորից երկիրը շարժի եւ պէտք լինի նորից փախչել։

«Առայժմ»։ Հալա...

Երկիրը առժամանակեայ բնոյթ է կրում։ Ինչ կը լինի, չի լինի։ Հալա այդպէս անենք, յետոյ կը տեսնենք։ Ընտանիքը, փողոցը, պետութիւնը անստոյգ ճօլօրիկի վրայ տատանւում են եւ մտահոգ վեր նայում։

Գիշերը լեցուն է ստուերների սեւ ծակերով։

Ցորեկը, մի բուռ սառը հով ձեռքին, կուրծքերի դէմ բռունցք է կարկառում եւ զառիվերից մէկ ոտքի վրայ չմշկելով վար նետւում։ Քաղաքի բնակիչները, վախին վարժ, կոտրատած մայթերի վրայ դուրս ցցուած մի քար են փնտռում եւ իրենց թաց ոտքերը վրան սեղմում։

Ընտանեկան փեթակի վրայ ծանր քար է ընկել, եւ ամէն ինչ ճղմել։ Մոմէ պատերը վրայէ վրայ են ընկել, մեղուները խենթացել են եւ թաղուհու աղիքների մէջ հազարաւոր սերմերը ապշած կանգ են առել եւ էլ չեն զարգանում։

Չնայած որ «Զակսը» առաջարկում է ազատ սէր՝ մէկ ռուբլի ամուսնութեան համար եւ մէկ ռուբլի ապահարզանի համար, ոակայն, նոր այդ զուգաւորումները պատսպարելու համար սենեակ չկայ։ Անկողինների մէջ անձկութիւնը մլուկների սիրտն է մաշում եւ վերմակների ծալքերը դերեզմանատան վերածում։

Քաղաքը դուրս է ցցել իր պատռատած ստամոքսը եւ բծաւոր տիֆօն եւ մալարիան ազատ ման են գալիս, Զինուորական Ակումբի երաժշտական խմբի անկարելի ընկերակցութեամբ։

Կառավարութիւնը, ամբողջ կազմով, կանգնել է հրապարակի վրայ եւ սեւ այս աշխարհին բարեւ է տալիս։

Ու երբ, քաղաքի չքերթին մասնակցելուց յետոյ, ուժասպառ, ցեխերի մէջ կորած, ջրակոյտերի վրայից ցատկելով, մէկը վերադառնում է տուն եւ փողոցի դռնից հազիւ ներս մտնելով քիթը զարնում է լուբիայի անտանելի հոտին եւ աչքերը խոհանոցային ամէն տեսակ առարկաներին, բնական է, որ նա զայրանայ եւ խեղճ Սաթօյի Իդդիրի բաղերի պատմութիւնը այլեւս չուզէ լսել։

— Դէ, եթէ վարագոյր չկայ, ի՞նչ պիտի անել,— ասում է Սաթօն եւ պայուսակները նորից բաց է անում, մէջտեղ է հանում հին շապիկ եւ վարտիք, սաւան, շորի եւ մետաքսի կտորներ, չափում է, մտածում, հաշիւ անում։

— Չէ,— ասում է,— դրանք չեղան։ Դրանց համար բիծայից կարագ կ՝առնեմ, վարտիքը կաթի դէմ կը փոխեմ, մետաքսով մի հաւ կ՝առնեմ։

Վանայ ժաժիկ։

Դարալագեազի պանիր։

Մի քիչ ցորեն, մի քիչ չորթան։ Ձիր։ Լուբիա։

Սաթօն ընտանեկան տնտեսութեան ջիղն է, ելեւմտական հանճարը, չինարար ոգին։

«Այս պատռած վարտիքը,— յայտարարում է նա,— աւելի արժէ, քան քու տուն բերած թղթէ միլիարդները։

Մի օր էլ, Սաթօն, յաղթական, բարձրա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան